



ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԱՆ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԽՄԲԱԿԵ ԹԵՐԹ

No 6

• Թիվ 6
ՀՈՒՏԵՄԲԵՐԻ
2010 Թ.
(Բուն Հայոց 4502 ք.)
Լույս է տեսնում
2009թ.
Հոկտեմբերից

Համախմբվենք յուրաքանչյուրիս և ընդհանուր խնդիրների շուրջ

ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՄՔ

Ամեն մոր ծնունդ, եթե բարի է նպատակը՝ գովելի է: Յուրաքանչյուր մոր բերք, անկախ ուղղվածությունից, կոչված է հաղորդելու, տեղեկացնելու, ավետելու լավի ծնունդը...
Ուրախությամբ տեղեկացա, որ վանածորի «Թիչք» կրթամշակութային և խորհրդատվական հե-ի համաձայն «Թիչք» պարբերաբերթը այսուհետ տպարանային արտադրությամբ է ներկայանալու ընթացողին: Թերթը հասարակության հայելին է, և որքան բազմակյուն լինի այդ հայելին, ամբան կշահի հասարակությունը: Թերթը անցնելիք ճանապարհ ունի, շտկելի բացթողումներ: Բայց կարևորը լրատվամիջոց կայացնելու վճարահամությունն է, որ համոզված եմ՝ տակավին

երիտասարդ ստեղծագործական կազմը, փորձառու ղեկավար Դոհաննես Նիկողոսյանի գլխավորությամբ, ունի:
«Թիչքի» ճախրանքին շատերն են սպասում: Թող ձեր ճանապարհը անփորձանք ու բարձրաթիչ լինի, պատվաբեռն ու շնորհատվող:
Մտքում են ամենայն բարիք ու բարձր նվաճումներ, ճախրաթիչ ընթացք՝ լրագրության բարդ ու դժվարին աշխարհում:

Չովհաննես Սարգսյան
«Մարզահովիտի Ձորակիզ» բերթի գլխավոր խմբագիր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ընդունված է ստել, թե մոր տարին իր հետ մոր հույսեր է բերում: Դեմ չեմ: Երբեք երբեք դրական լիցքերով, հավատարմությամբ երազում ու հույս փափագում, որ կլինեն փոփոխություններ ու անպայման այդ փոփոխությունները կլինեն բարի, կտանեն դեպի նորամուտ ճեղքերումներ, դեպի բարեկամություն, դեպի առաջ...
Առաջ...

Էդ լավ է, բայց ո՞ր ճանապարհն է առաջ տանում, որտեղ է այն գտնվում:
Եթե դա այն է, ինչ կատարվում է կրթական համակարգի հետ, ապա առաջարկում են լրջագույն ձևով մտածել որոշ իմաստով հետ գնալու մասին: Թե չէ այս առաջընթացի մեջ որոշակի անորոշություններ, ու կայուն անկայունություն:

Երբ միջնակարգ կրթությունը դարձավ տասներկուամյա, թվում էր, թե ծրագրերը համեմատաբար կբեթևանան, այնինչ երեխաները դպրոցում են լինում միջինը մինչև 15:00-ն՝ առնվազն կիսով չափ զրկվելով արտադրացական հիմնարկների համակարգից: Երեխաների հոգ-նաճարությունն ակնհայտ է, մինչդեռ դաստիարակությանը առաջնությունը մեծամասնությամբ տալուց այն էլ սուղ արտադրացական ժամանակը նվիրում է կրկնուկրկնների մոտ պարապմունքների համակարգում, պարզ է դառնում, որ դպրոցում մատուցվող ուսուցանման որակի մասին խոսելու ավելորդ է:
Այս պարզ գաղափարներն են ակնհայտ փաստերը հասանելի են ամեն մեկիս համար և չեն կարծում, որ պետության այրերի ու երկրի կրթական քաղաքականությունը որոշողների համար սա նորություն է, կան է նրանցից որևէ մեկը կարող է ապացուցել, որ տիրող իրավիճակը լավագույնն է բոլոր հնարավոր տարբերակների մեջ:

Մասնավոր գրույցների ժամանակ մասնակավորները, աշակերտներն ու վերջիններիս ծնողները պահը բաց չեն թողնում իրենց դժգոհությունն արտահայտելու, սակայն որպես բոլորը վերջգիպի անհմատ ու անարդյունավետ կենտրոններ են, քանզի իրենց մեջ ոչ մի կառուցողական բան չեն պարունակում: Ցավոք մեր կրթական համակարգը չի տալիս բավարար չափով քաղաքացիական կրթություն, որը պետք է հնարավորություն տա հասարակությանը կարևորագույն հարցերում ինքնակազմակերպվելու և անպատու դժգոհությունների փոխարեն ակտիվորեն լծվել սեփական խնդիրների լուծման սայլին: Այս իմաստով անցնող տարին ոչ մի էական բան չուղի:

Մինչև ոմանք համակերպվում են, ոմանք՝ ընդվզում, համակարգը շարունակում է իր վրիպողությամբ՝ անմասնատվաբան լուծումներ մեր գեմֆոնը, այնպես, ինչպես հիմնադրամի հաշվի մեջ փող փոխանցելու կոչ անողներն են նույն օրերին խաղատներում միլիոնավոր դրամներ վատնում:

Մեր կարևորագույն հարցերի, մասնակրթապես կրթության, նկատմամբ այսպիսի անհեռառես վերաբերմունքով չեմ կարծում, որ հեռու կգնանք, որովհետև դրանով ջուր ենք լցնում մեր վայ հարևանների ջրաբացին...
Բայց լիապես են ու հավատում են ազգայն ապագային և գալիք են հարթանակներին: Հավատում են, որ մենք Պապն այս տարի բեկում կնոցնի մեր մտածողության մեջ:

Լավագույն սպասելիքներով ու մաղաքներով՝ առաջ, դեպի ճագարի տարի...

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 2010 թվականը, որը կազմակերպության գոյության յոթերորդ տարին էր, վտահորեն կարող ենք փաստել, որ անցնող տարվա ընթացքում կազմակերպությունը ամեն թե քանակապես, թե որակապես: Չարգացման ու կայացման ճանապարհին «Թիչք» հե-ի արձանագրած ձեռքբերումներն ու նվաճումները, վրիպումներն ու բացթողումները ունեցել ենք ջրտնաջան աշխատանքի արդյունքում՝ ավելի լրջանալով, դառնալով առավել ունակ ու բազմամարդ, ինչի խոսում վկայենք են ակտիվ ու նախաձեռնող երիտասարդական թվը, լրագրողին հատուկ ջանասիրությամբ աշխատող լրագրողական խմբակները, ընթերցումներ, գրույցներ կազմակերպող գրական գեղարվեստական խմբակը, մանկական պարզ ու միևնույն ժամանակ խորը մթնոլորտում ձևավորված «Կրտսեր հայրդրաց» խմբակը: Այսօր ընդհանուր թվով կազմակերպությունն ունի 75-80 անդամ, ուժեր իրենց ուժերով տարվա ընթացքում կազմակերպել են տարաբնույթ քննարկումներ, գրական ընթերցումներ, բանավեճեր, գրույցներ տարբեր թեմաների շուրջ, միջոցառումներ, ուխտագնացություններ, ակցիաներ, այցելություններ տարբեր կրթական և մշակութային օջախներ, հանդիպումներ քաղաքի մտավորականության և տարբեր ոլորտներում կայացած մարդկանց հետ: Կազմակերպությունը համագործակցում է նաև Լոռու մարզային գրադարանի, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությանը կից «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի, Հայ Առաքելական Եկեղեցու, հե-ի ու այլ կազմակերպությունների ու պատկառելի անձանց հետ:

Իմի բերելով ասվածը կարելի է հստակ բարձրաձայնել, որ կազմակերպության ունեցած հաջողությունները ջայտում են և ակնհայտ, ինչն էլ պիտի հենք հանդիսանա բազում մոր բարձունքների նվաճման ու առավել պանառ ապագա կերտելու համար:

2010 թվականին «Թիչք» հե-ի մշակութային կյանքը բերում էր ու բազմաթիվ նվաճումներ: Կազմակերպվել են տարաբնույթ բազմաթիվ միջոցառումներ, որոնք իրենց բովանդակությամբ և ժամանողական ու ժաշակի ձևավորման տեսանկյունից արժեքավոր ու կարևոր էին յուրաքանչյուր թիչքալանի համար:

«Թիչք» հե-ն մշեք առաքելական եկեղեցու տարակար բոլոր տոներին՝ անդրադարձնելով նրանց և հոգևոր, և ժողովրդական մշտան արարողակարգերին, որանցից էին Սուրբ Ձատիկը, Համբարձման տոնը, որի ընթացքում ներկայացվեց տոնի էությունն ու արարողակարգը, պատմիների կողմից բեմադրվեց ժողովրդական կատակ - խալ՝ «Ջան գյուլուն» - ը, Պայծառակերպության կամ Վարդավառի տոնը, որն իրականացվեց քննործարանի այգում՝ որպես համաքաղաքային տոն-միջոցառում:

«Թիչք» հե-ն մասնակցել է խաչերթին՝ ավիրված Խաչքերաց տոնին:
Շատ կարևոր ու առանձնահատուկ են եղել կազմակերպության անդամներին վկայական-



ների հանձման միջոցառումները, որոնց ընթացքում բուն արարողությունից բացի խոսվել է գրի ու գրքի մասին, Լոռու մարզային գրադարանում նշվել է հայ մեծ գրողներ՝ Ավետիս Իսախանյանի, Գաբրիել Սուճուրյանի, Հրաչյա Մաթևոսյանի հոբելյանները: Միջոցառման ժամանակ ընթերցվել են նրանց կենսագրություններից ու ստեղծագործություններից հատվածներ, ներկայացվել է բեմականացում՝ Հր Մաթևոսյանի «Նտույզս, մտույզս» պատմվածքի հիման վրա: Գրքաների խմբակի կողմից մեծ հեղինակություն էր վայելում մեծ քննադատ Կահան Տերչյանի 125-ամյակը՝ ասուներով, երաժշտությամբ ու խոսքերով կյանքի վերջին րոպաների մասին պատմող ընթերցմամբ համեմված:

Յուրաքանչյուրիս յուրաքանչյուրի պաշտպանության միամտական շրջանակներում կազմակերպված միջոցառումների հազցած շարքը, հստակապես այն միջոցառումը, որի ընթացքում «Թիչքի» պատմիների կողմից հնչեցին երեխաների պաշտպանության հռչակագրի բոլոր կետերը՝ հորդորելով մեծերին լինել ավելի հանդուրժող ու բարի, հարել փոքրերի իրավունքները:

Իր տեսակով ու բովանդակությամբ առանձնահատուկ էր Հովհաննես Թումանյանի «Գիթեր» պատմվածքի հիման վրա ստեղծված «Համրոյի դառավարություն» թեմայով միջոցառումը, որի ընթացքում երգվել էր անեղանակների կողմից լավեց գյուղացի Համրոյին ներկայացված վճիռը՝ ի օգուտ բոլոր համրոների, որոնք իրենց համապատգոյա հաջը փորձում են գտնել օտար ավերում:

Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել են արշավներ, էքսկուրսիաներ, ուխտագնացություններ՝ յուրաքանչյուր անգամ քննարկելով, թե արշավների, թե ուխտագնացությունների էությունն ու նպատակը, որոնց ընթացքում եղել են այցեր թանգարաններում, տուն-

թանգարաններ, պատմամշակութային վայրեր:

Իր արարողակարգով ու կարևորությամբ ինչպես մեծ վերջերս կազմակերպված ուխտագնացությունը Գոշալվանքի ու Հաղարծնի վանական համալիրները, որի ժամանակ տեղի ունեցավ «Թիչք» հե-ի անդամների երոճան արարողությունը: Այն մասնավորապես պատգամում էր լինել հավատարիմ մայրենի լեզվին ու պատվով կրել հայ լինելու կոչումը: «Թիչք» հե-ի կողմից իրականացված յուրաքանչյուր միջոցառում իր թեմատիկ դրսևորումներով, բովանդակային կառուցվածքով, հավատարիմ է մնացել որդեգրած գաղափարախոսությանը՝ նպաստել կիրթ ու բանիմաց մարդու ձևավորմանը՝ ինչպես միշտ մեր ընդհանուր առաջընթացը տեսնելով կրթությանը զարգացման և բոլոր ոլորտներում մշակութային ձևավորման մեջ: Մեր օրեցօր աճող ու զարգացող կազմակերպությունը բոլոր հնարավոր միջոցներով նպաստում է առողջ հասարակություն ձևավորելու պատասխանատու ու պատվավոր գործին:

Մտում է տարեմուտի շեմին գալիք տարվա խորհրդանիշ՝ ԱՊՐԱՍՏԱԿից խնդրել, որ 2011 թվականն ավելի բերուն ու հազցած լինի մեզ համար, տարեցտարի կազմակերպությունն ավելի ամրանա ու կայանա, ինարկել, ոչ առանց մեր ջանքերի:

Եվ թող գալիք 2011 թվականը նշանավորվի որպես կրթության ու մշակութային ոլորտներում ակնառու նվաճումների տարի, խաղաղություն ու շենություն բերի երկրիս օջախներին:

Ծնեյա Նախիջան
«Թիչք» հե-ի փոխնախագահ
Լիլիթ Համբարձումյան
մշակութային բաժնի պատասխանատու,
պատանեկան թևի ղեկավար

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹՈՒՉՔ

Մենակ հայերը Նոր Տարուն

Այս, հայեր, հայեր: Ինչե-րով ասես նրանք չեն տարբերվում մնացած ազգերից: Իրենց հյուրասիրու-թյամբ, ընկերասիրությամբ, ջեր-մությամբ և էլի շատ այլ բաներով: Այդ ամենում բացառություն չէ նաև հայերի **Նոր տարին**: Ինչպես են նրանք անցկացնում **Նոր տարին**, ինչեր են հատուկ միայն հայերին **Նամուրհի**:

2. Մենակ հայերն են ատուն, որ այս տարի Նոր տարի չեն անելու, որ-պեսզի հարևաններն իրենց մրցակ-ցությունից դուրս հանեն, որպեսզի հետո հանգիստ սեղան գցեն:

3. Մենակ հայերն են, որ երբ երե-կաններն ուզում են սեղանից մի բան վերցնել, ատուն են թողնե-լ հարևանները գան տեսնեն հետո կվերցնեն:

4. Մենակ հայերն են, որ Նոր տա-րուց հետո ուտում են նոր տարվա սեղանից մնացած ուտելիքները, իսկ հետո թունավորվում:

լիս, երբ ինչ-որ բան են նվեր տա-նում, մի քանի օր անց այդ նույն նվերը պատվում ու հայտնվում է իրենց տանը:

6. Մենակ հայ կանայք են, որ ամու-սիներն ինչքան էլ հարթած լինեն, հասցնում են տուն:

7. Մենակ հայ հեռուստաընկերու-թյուններն են նյութերից շնորհավո-րում Ամանորն ու Նուրբ Ծնունդը և սկսում իրենց ամանորյա ակցիա-ները, վերջում էլ պարծենում, որ իրենք աշխարհում առաջինն են շնորհվորել զալիք տոները:

1. Մենակ հայերն են, որ պարտքով փող են վերցնում, շքեղ Նոր տարի են անում, իսկ հետո ամբողջ տա-րին պարտք են փակում:

Անահիտ Պողոյան

«Այն ազգը, որը միասնական չէ, դատապարտված է կործանման»

Պատմությունը վկայում է. մեր հակառակորդները կարողացել են մեզ հաղթել միայն մեր միա-սանձության քայքայության պատերձի... Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ու-տումնաիրելիս հասկանում ենք, որ հայերն շատ ծա-ծանակ միասնական չենք եղել, որի պատճառով տար-բեր պետություններ գրավել են հայկական տարած-քերը: «Հայաստանը դարձնելով մի բուն: Եղել է, որ միավորվել ենք, կամ միավորվել ենք ընդամենը կիսով չափ, ու այդժամ անպայման հաղ-թել ենք: Հիշենք Ավարայրը, որի ժամանակ հայ ազ-գը միավորվեց, մի բռունցք դարձավ, որպեսզի քրիս-տոնեությունը կրակապաշտությանը չփոխարինեն: Ու ազգս կատաղի կռիվ տվեց իրենց երկու-երեք անգամ շատ պարսից զորքի դեմ: Մարտից հետո Ավարայրի

դաշտը դարձել էր արյան դաշտ, որտեղ հայոց զորքն ավելի քիչ զոհ տվեց, քան պարսից կողմը: Այս կվտու-րաբանությամբ մեծամեծ հայեր միասնացան ու մարտի-րականացան հանուն հայոց ապագայի, իրենք օրինակով ապացուցելով միասնության ուժը: Ցավոք ունեցել ենք նաև դավաճաններ, որոնց արժանի գնահատականը արդեն իսկ պատմությունը տվել է: «Հաշվի առնելով պատմության դասերը, ուզում են Ամանորի նախշեմին Ձմեռ Պապից հայերին համար միասնություն խնդրել, որպեսզի 2011 թվականին մեր բոլոր խնդիրների դեմ հանդես գանք միասնական ձևակառույցով:

Պավլոս Ուլիխանյան



Անչափահասները խախտում են օրենքը

Այս անգամ իմ գրուցա-կիցն էր Կանադոյի ուս-տիկանության անչա-փահասների բաժնի պետ Ռուդիկ Կարոյանը, որն իր խոսքում ակտի-վորեց հայտնեց, որ անչափահա-սների կողմից կատարվող հանցա-գործությունների քանակը անցող 2010 թվականին նախորդ տարվա համեմատ ավելացել է տասով: Չորսյի ընթացքում պարոն Կարո-յանը պատմում էր այն մասին, որ իր աշխատանքային գործունեության ընթացքում ինչ աստիճանի հանցա-գործություն ասես չի տեսել: Միայն 2010 թվականի ընթացքում արձա-նագրվել են անչափահասների կողմից կատարված 50 -ից ավելի տարբեր աստիճանի հանցագոր-ծություններ՝ մարմնական վնաս-վածքներ, գողություններ, վեճեր, փրկարկումներ և այլն: «Հանցագործությունների մեծ մա-սը կատարում են այն անչափահա-սները, ովքեր 9-րդ դասարանից հետո

դպրոց չեն հաճախում, այսինքն՝ 14-ից մինչև 17 տարեկան դեռահասնե-րը, - ասաց պարոն Կարոյանը: Վերջինիս ներկայացրած վիճա-կագրական տվյալներն այսպիսին են՝ ընդհանուր առմամբ կատարած հանցագործությունների համար այս տարի 5 անչափահաս կալա-նավորվել է, 7-ը՝ ստացել պայմա-նական ազատագրություն, իսկ մնա-ցած անչափահասների գործերը մերժվել են: Կանադոյի ուստիկա-նության անչափահասների բաժ-նում կա 8 աշխատակից, ովքեր ամեն օր շրջայցում են կատարում դպրոցներով, այգիներով, բակե-րով: Նպատակն այն է, որ կանվաճե-հնարավոր անցանկալի դեպքերը: Վերջում գրուցակիցս հույս հայտնեց, որ գալիք 2011 թվակա-նին կտրուկ կնվազեն անչափա-սասների կողմից օրինախախ-տման դեպքերը: Մտնում է հուսանք:

Կալես Մատինյան

Աշունը իմ աչքերով

Աշունը եղանակներից ամենազեղչիկն է: Այն միայն եղանակ չէ, այլ իր մեջ ներառում է նաև սիրո խոր-հուրդն ու գեղեցկությունը, այսինքն աշունը սիրո եղանակ է: Եղանակ, որն իր մեջ ընդգրկում է բոլոր գույ-նային տերևների և բերանաբաց եղած ծառերի մասնակցությունը: Աշունը տխուր ու թախծուր եղա-նակ է: Երբ մտնում ես պուրակ, մի տեսակ դատարկություն ես գզում, բայց երբ տեսնում ես, որ երեխա-նները խաղում են տերևների մեջ՝

տխուրությունը անմիջապես վեր է ածվում ուրախության: Ամեն օր տնից դպրոց գնա-լիս, ուշադիր, շունչս պահած, նա-յում եմ ծառերին և ամեն ընկնող տերևի հետ զգում եմ, որ ձմեռը հեռու չէ: Սիրում եմ աշման հաս-կապես սկիզբը, երբ բերքահավաք է ու երեխաներն իրենց ծոցնե-րին օգնելով հավաքում են բերքը: Ձմեռ սիրում աշման այն հատվածը, երբ բնությունը սկսում է մահանալ՝ չդիմանալով արդեն սառը օդին, որն իր մարտահրավերն է նետում

աշմանը և միշտ հաղթում... ու ձմե-ռը ծանում է իր իրավունքների մեջ: Հիմա, երբ արդեն մոտենում է հունվարը, բոլորն իրենց տներում պատրաստվում են Ամանորյա տո-ների, ամենուրեք բարձր տրամադ-րություն է, տարիքից անկախ բոլորն սպասում են Ձմեռ Պապի նվերներին, հասկանում են, որ նույնիսկ ծիսա-քակարյան պայմաններում ձմեռը նույնպես գեղեցիկ եղանակ է:

Հարություն Քարաջայան

Հարցազրույց Ձմեռ պապի հետ

Առատ ձյուն է գալիս, հե-քիաբային երկու է: Կանգառում կանգնած սպասում են: Վերջապես մոտե-ցավ երկար սպաված ավտոբուսը: Բարձրացա ու միայն այդ ժամա-նակ հասկացա, որ դա տվորական ավտոբուս չէ, միայն մեկ ողոր պար՝ փարթած ձերմակ մորուզով և շքեղ կարմիր թիկնոցով: - Բարև, աղջիկ, շնորհավոր ըր Նոր տարին,- մեղմ ժպիտով ասաց նա: Եվ միայն այդժամ հասկացա, որ իմ ուղեկիցը Ձմեռ պապն է: Որ-տեղի առիթից օգտվել և Ձմեռ պա-պին տալ այն հարցերը, որոնք դեռ մանկուց հետաքրքրում էին ինձ: - Ինչպե՞ս եք հասցնում մեկ գինեղան ընթացքում բաժանել բո-լորի նվերները: - Ընչտ է: Ես միայնակ չէի կարող կատարել այդ դժվար, բայց հաճե-լի գործը: Ինձ օգնում են իմ թոռու-նի Ձյունամուշը և բարի կեղծար-հները: Բացի այդ՝ հենց դրանում է կայանում Ամանորի իրաշքը,- պա-տասխանեց Ձմեռ պապը: «Հաջորդ հարցը հնչեցրի մի փոքր դադարից հետո: - Իսկ ինչպե՞ս եք նվերները հասցնում հասցեատերերին: - Շատ հեշտ և արագ: Բոլորին է հայտնի, որ ես ունեմ եղնիկներ, որոնք կարողանում են շեքերի տանիքների վրայով թռչել: Հենց իրենց օգնությամբ էլ ես կատարում եմ իմ առաքելությունը: Ես համոզված էի, որ բոլորին է

հետաքրքրում, թե քանի տարեկան է Ձմեռ պապը: Այդ հարցին նա պա-տասխանեց. - Ես շատ-շատ մեծ եմ: Երբ որ մարդիկ նշեցին առաջին Նոր տա-րին, հենց այդ պահից էլ ես ապրու-ման և ուրախացնում եմ բոլորին: - Իսկ ինչու՞ մեծահասակները չեն հավանում Ձեր գոյությունը: - Մեծահասակներն էլ են մա-նուկ եղել և հավատացել իմ գոյու-թյանը: Մարդիկ մեծանում են, ցույց են տալիս, թե չեն հավատում, բայց իրականում բոլորն էլ իրենց սրտի խորքում հավատում են իմ գոյու-թյանը և ամանորյա իրաշքերին: Երբ պատրաստվում էի իջնել, Ձմեռ պապն ինձ հարցրեց, թե ես ինչ եմ ուզելու իրենցից: Մի փոքր մտածելուց հետո ասացի. - Կցանկանաի բոլորին հաջո-րդություն, աշխարհին՝ խաղաղություն, և ընտանիքներում՝ երջանկություն: - Ես պարտավոր եմ կատարել բոլորի ցանկությունները: Վստահ եղիր, որ ըր ցանկությունը ևս կկա-տարվի: Եվ հանկարծ լսվեց զարթու-ցիչի ձայնը: Մի պահ չէի հաս-կանում, թե որտեղ եմ և ինչ է կատարվում շուրջս: Սթափվեցի և հասկացա, որ դա ըզրիսնե-րը երկու էր... Բայց ես չեմ հու-սաստանում: Չէ՞ որ երազներն ու երեզանքները իրականանում են: *Սանն Նալբանդյան*

Ամանորյա հրաշքեր

Նոր տարին այն հին ժո-ղովրդական ավանդական տոներից է, որ զնվում է մինչև օրս: Նոր տարվա տոներ տաի-ների ընթացքում մի շարք փոփո-խությունների է ենթարկվել: Յուրա-քանչյուր տարին ունի իր խորհուր-դը և մարդիկ տարբեր տարիներից ունենում են տարբեր սպասելիք-ներ: Քամի որ 2010թ. մոտենում է իր ավարտին յուրաքանչյուրին հե-տաքրքրում է, թե ինչպիսին է լինե-լու 2011թվականն իր համար: 2011 թվականը խոստանում է լի-նել հաջողություններով լեցուն, բայց մի մոռացեք, որ հաջողության հաս-տում են նրանք, ովքեր աշխատում

են: Եթե ցանկանում եք, որ 2011 թվականը բարեխաջող լինի, ապա Նոր տարվա գիշերը, ուղիղ կեսգիշե-րին, բարձր գոռացեք «Շնորհավոր Նոր տարին»: Ամանորյա գիշերը կա-խարդական ուժ ունի և կեսգիշերին սակավ մաղթանքներն ու ցանկու-թյունները կատարվում են: Ամանորը բարձրացնում է բո-լորի տրամադրությունը և բոլորը հավատում են, որ հին տարվա կի-սսատ գործերը նոր տարում կավա-րտեն: Նապաստակը, եկող տարվա խորհրդավորձը, խոստանում է, որ բոլորի կեսատ գործերը բարեխա-ջող իրենց ավարտին կհասնեն: Ամանորը մի տոն է, որը կապում

է անցյալը, ներկան է ապագան: Բոլորը հավատում են Ամանորյա հրաշքին, հատկապես երեխաները: Այդ հրաշքերից են Ձմեռ պապը, Ձյունամուշը, տոնածառն ու իրե-շտ սպանները: Ամենքս հավատում ենք հրաշքին և սպասում ենք անակն-կալների: Չկարծեք, թե եթե նա-պաստակը վախկոտ կենդանի է, ուրեմն եկող տարի բոլորը վախե-նալու են, ընդհակառակը՝ նապաս-տակի տարին շատ զվարճալի և հե-տաքրքիր է լինելու: Այսպիսով թող նապաստակը բոլորին հաջողու-թյուն բերի: Շնորհավոր Նոր տարի:

Մերի Մարանդյան

Իմ մանկության Ձմեռ պապը

Ձմեռ պապի հետ կապված հիշողությունները դասվում են մանկության լավագույն հիշո-ղությունների ցանկում: Երևի Ձեզանից յու-րաքանչյուրն էլ ինձ հետ կհամաձայնի, որ ցանկացած մանուկի նոր տարին գրավում է միայն տոնածառով ու Ձմեռ Պապիկի նվերներով: Փոքրիկների համար Ձմեռ Պապիկի գոյությունը պայացուց էր, որ հրաշքներ լինում են, որ աշխարհում ամեն ինչ արդար է և կա բարոյե-տուն, որ բարաբի չար ու ջղայն պարսկների կողքին կա նաև մի բարի պապիկ, որն իրենց երեք չի մոռանում և նվերներով այցելում է տարին գոնե մեկ անգամ: Հիշում են, թե ինչպես էի ցանակ գրում Ձմեռ Պա-

պիկին ու տալիս մայրիկիս, որ նա ցանակս փոխանցի վերջինիս: Ու հավատում էի, որ մայրս կփոխանցի: Սիգուրեք փոքր ինչ այնպեսով եմ իմանալով ճշմարտությունը, բայց այնուամենայնիվ կարիք ամեն մի էտապ ունի իր համը ու հուրը և հենց Ձմեռ Պապիկին է իմ մանկական տարիների կարևոր հետաքրքրություննե-րից մեկն էր: Իսկ հասուն տարիքում այդ «տուրը» միայն ուրախ ու համեղի պատեր է պարզում:

Ես շնորհակալ եմ ծոցներիս մանկությունս գեղե-ցիկ հեքիաթի վերածելու և Ձմեռ Պապի գոյությունն ինձ համար հեմարավորին չափ երկարացնելու համար: *Գայանե Գրիգորյան*

իմ մանկության Ձմեռ պապը

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹՈՒՉՔ

Նոր տարի կամ Կաղանդ

Տարեմուտը՝ Նոր տարին, այսօր տոնում են և քրիստոնյաները, և այլադավանները: Տարեմուտը գոտ տարին տարով փոխելու տոն չէ, այլ հոգևոր խորհուրդ ունի: Սակայն Տարեմուտը տոնվում էր միայն 1-իմ մարտի 22-ին՝ Ադամի ստեղծվելու օրը՝ ինչպես ամիսների սկիզբ: Այդ օրը մարտի 1-ի միջանց շնորհավորում էին և ընծաներ մատուցում, քանզի այդ օրը Ադամի ստեղծման օրն է, ունից և մենք սերվեցինք: Այդ պատճառով «միսան»-ը թարգմանվում է կազմություն և լինելություն: Այդպես Տարեմուտն ավանդաբար տոնվել է մինչև Բաբելոնի աշտարակաշինությունը, որից հետո այն պահպանվեց միայն Եթեբի ընտանիքում, ունից և ավանդվեց հրեաներին:

Մյուս ազգերը սկսեցին Տարեմուտը տոնել տարբեր օրերի: Լեզուների քաժամանակից հետո 72 ազգերի բաժանումները իրենց ընտանիքներն առաջնորդեցին դեպի իրենց փնտրված երկրները, և այն օրը, երբ տեղ հասան, Տարեմուտ հայտարարեցին իրենց ազգի համար, և տվյալ ամիսը՝ տարվա առաջին ամիս: Եվ ամեն տարի այդ օրը միայն շնորհավորում էին ու առում: «Նոր օր, նոր տարի: Քանզի այսօր մենք մտածեց մեր երկիրը, որը ժառանգեցինք»:

Հայերը Տարեմուտը տոնում էին ամառը՝ օգոստոսի 11-ին, ըստ հայկական օրացույցի՝ նավաստի-դի 1-ին: Ըստ ավանդության, Հայկ Ահապետը Հայոց ձոր գավառում օգոստոսի 11-ին է սպանել բռնակալ Բելին և ազատություն պարգևել իր ստեղծված ու հետնորդներին: Այդ ժամանակից էլ հայերը Նոր տարին սկսել են տոնել օգոստոսի 11-ին: Ենթադրվում է, որ դա տեղի է ունեցել Մակաբեյ Բրիտանոս 2492 թվականին:

Եգիպտացիները, թեովկացիները, կապադոկիացիները, վրացիները և արվանդները տոնում էին

հայերից չորս օր հետո: Հույների ու սաղարների Տարեմուտն աշնան էր՝ սեպտեմբերին: Հռոմեացիներիը՝ ձմռանը՝ հունվարին:

Այսօր բոլոր քրիստոնյա ազգերը Տարեմուտը տոնում են հունվարի 1-ին: Հունվարը նշանակում է ծնունդ: Քրիստոս այդ ամիսն ծնվելով՝ ավերեց դժոխքը, մեզ ազատեց հավիտենական մահից, և առաջնորդում է երկնքի արքայություն, այդ պատճառով էլ այդ ամիսը մեզ համար դարձավ ամիսների սկիզբ: Դա մեր Փրկչի ծննդյան թվականն էր՝ առաջին ամսվա առաջին օրն է, և այդ օրը եկեղեցիներում տարբեր Պատարագ է մատուցվում: Այդ օրը հավաքվում ենք միասին, տոնում Տարեմուտը և միմյանց ընծաներ մատուցում՝ ասելով՝ «Շնորհավոր Նոր տարի»: Եվ գոհություն ու երկրպագություն ենք մատուցում Տիրոջը, որ ամենօր տարին խաղաղություն անցկացրինք և խնդրում, որպեսզի եկող տարում ևս մեզ խաղաղությամբ պահի:

Այս տոնը կոչվում է նաև Կաղանդ և Ամանոր: Կաղանդը նշանակում է ամառվույն, այսինքն՝ ամսվա առաջին օրը: Այսօր Կաղանդ է կոչվում տարվա առաջին օրը: Հայերն տարվա առաջին օրն անվանում ենք նաև Ամանոր, որը բուն հայկական բառ է, որտեղ «ամ» նշանակում է տարի, այսինքն՝ Նոր տարի: Նաևասարը, որը զենդերեն բառ է, նույն իմաստն ունի. «նավ» նշանակում է նոր, իսկ «սարը» տարի:

Տասնութերորդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տոնարով, հունվարի 1-ը ընդունվեց որպես Նոր տարվա սկիզբ հայերիս համար:

Ժողովրդի մեջ սովորություն կա ամանորյա տոների կապակցությամբ տոնածառ զարդարել, որը Դրախտի Կենցառ ծառի խորհուրդն ունի: Մեզ մոտ ընդունված է եղևնի զարդարել, որի մշտադասարանները խորհրդանշում է Աստծու

անսպառ բարիքները և անհատուն շնորհները:

Իսկ կեսգիշերին նվերներով մեզ հյուր եկող Ձմեռ պապը, ըստ ավանդության, սուրբ Նիկողայոս հայրապետն է՝ Ձմեռու ընդառնադեմ մեծարարությամբ: Նա 325 թ. մասնացել է Նիկիայի տիեզերական ժողովին և եղել 318 հայրապետների թվում: Սուրբ Նիկողայոսը, ում եկրոպագիներն անվանում են «Սանտա Կլաուս», մեծ սքանչելագործ է եղել: Նա իր աղոթքներով օգնության է հասել բազում ներյալների: Նրա աղոթքներով վերստին թխել են ցամաքած աղբյուրները, բազմացել է հացը, հալածվել են դևերը, սրբվել՝ ավստակիրները: Սուրբ Նիկողայոսի մահից հետո էլ մարդիկ շարունակել են դիմել նրա բարեխոսությանը և ստացել իրենց խնդրվածքները: Այդ պատճառով էլ ժողովրդի մեջ տարածվել է այդ անմահա սրբի համբավը և հասել մինչև մեր օրերը: Սուրբ Նիկողայոսի տոնը Հայ Եկեղեցին տոնում է Սուրբ Խաչի տոնի տասներորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Հնագույն ժամանակներից ի վեր բոլոր ժողովուրդների համար տարեմուտը նշելու ժամանակը կապված է եղել նրանց կյանքում առանձնակի կարևորություն ունեցող իրադարձությունների հետ: Տարեմուտի ժամանակի փոփոխություն հետ, բնականաբար, փոխվեցին նաև մարդկանց ու ժողովուրդների՝ տարեմուտը նշելու սովորությունները: Քրիստոսի ծննդյան ամիսը դարձավ տարվա առաջին ամիս, իսկ դրա առաջին օրը՝ տարվա առաջին օր: Այդ օրը եկեղեցիներում մատուցվող ս. Պատարագի արարողություններով հայացվում է Աստծու օրհնությունը նոր սկսվող տարվա համար:

Արմեն սարկավազ Բայդայան
զորամասի հոգևոր սպասավոր



Նվիրում են նկարչուհի, խեցեգործ Լուսե Երեմյանին Լուսե շողեր

Գ... տա... իսկապես գոտ մի մարդու, ում հետ կարող են գրուցել արվեստից, լինված քանցի սիրտը և ակնկի՜ն՝ տաճակալի մասն ԳԵՂԵՑԻԿԸ, որ սպասվածից էլ շատ է:

Մի լույս էր, բայց չքնաղ գեղեցկուհու երկրային կերպարանով: Երբ ծնվել է, նրան մայրը կոչել է ԼՆԱՍԵ, որպեսզի լույսի պես առջիկ դառնա: Գուցե ի վերուստ էր կոչված Լուսե, որ հայոց աշխարհին լուսե գործերում, ասել կուզի գեղեցիկ է ու նուրբ այդ աշխարհը: Նրա վրձնաշխարհում գեղեցիկ է ամեն ինչ՝ հորիզոնական ու կրկնաչափով, որ մեր կերպարվեստի վառ վրձնադարանն ավելացնում է ընտիր ստեղծագործություններով:

Նրա կարողանում է ստեղծել բնանկարներ: Երբեմն էլ Լուսե քանդակագործուհու ասելիքը կարող է մի ամբողջ պատկանք կամ էլ վեպ արտահայտել:

Սկսաբանելու Խոստում պատկերներով ու կերպարներով է աշխարհին լուր տալիս իր մտքերի մասին: Հի-րավի, նրա ստեղծագործությունները տանում են դեպի այնտեղ, ուր յուրաքանչյուր երևույթ թթված է իսկական վրձնապատկերով: Կախարդիչ գունապալերներն են պարուկում Լուսե նկարչուհու լուսե շող վրձնաշխարհում: Մի ամբողջ սիմֆոնիա գեղեցիկ է կտավում, բայց արդարացված ու ասելիքի և մտքի շնչարտադիչ բովանդակությամբ: Նրա կտավները պատված են մտքի անուշաբույր ամենբնույթությամբ, ու թեզ գունու պայտեր, որտեղ բացվում և ընդհանրանում է կերպարվեստի ամբողջական իրողությունը:

Իվան Անտոնյան
ԵԹՎԻ-ի Կանոնների մասնաճյուղի դիպլոմանտ, «Մաշտոց» հանդեսի գեղարվեստական խմբագիր, «Թիֆլ» հիվանդանոցի անդամ

Օրհնություն

Ամեն մի հիանմանի ու ավանդաշատ ժողովուրդ, առավել ևս մենք՝ հայերն, ունենք մեր սովորույթներն ու բարքերը, որոնք էլ ունեն իրենց բովանդակալիս խոր իմաստն ու առաջացման պատճառները: Դարերի խորքից էլ մասնաբաժնի ընկնելուց առաջ, որևէ գործ սկսելիս, կարևոր իրադարձությունների ժամանակ մարդիկ մեծեղի, հատկապես ծնողների կողմից օրհնանք են ակնկալել՝ որպես հաջողության երաշխիք: Կարծում են ինձ հետ կհամամայնվեք, որ օրհնություն բառը լսելիս ամենիցապես մեր մտապատկերում հառնում է եկեղեցին՝

խնկարյուր պատերով, արդաշատ մթնոլորտով, հավատավոր ժողովուրդի իր ամբողջությամբ:

Մեզառնում շատ է կարևորվում հատկապես եկեղեցու կողմից օրհնությունը:

Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը մկրտությունն է, որն իր մեջ նաև օրհնության խորհուրդ է պարունակում: Մարդը լույս աշխարհի գալով՝ իր վրա կրում է արանակալան կամ սկզբնական մեղքը: Ադամն էր մարդկային ցեղի գոյության սկիզբը, և բոլոր մարդիկ լույս աշխարհի գալով ժառանգում են նախահոր դրախտում գործած մեղքը: Ծնունդից ութ ամիս քառասուն օր հետո մանկան

լույս աշխարհի գալն ազդարարվում են նաև մկրտությամբ: Սուրբ Մկրտության խորհրդի կատարմամբ մարդը մաքրվում է արանակալան մեղքից, դառնում Աստծո որդեգիրը և Առաքելական Ստոր եկեղեցու զավակը՝ վերստին ծնվելով:

Մենք՝ բոլորս, կարիք ունենք Տիրոջ օրհնությունն ստանալու՝ մկրտված լինելու: Դրա անհրաժեշտությունը պետք է գիտակցել յուրաքանչյուր հայ քրիստոնյան:

Ավետյան Արզումանյան
կրթական բաժնի պատասխանատու

Մեր ընտրությունը

Կրկին դեկտեմբեր է, և ինչպես ամեն տարեմուտի, այս տարի ևս տոնակալ ենուզեղից գատ ուսանողների մտաբերող հարցը շարունակվում են մնալ նրանցից շատերի համար աջիկվեյան զարգացար հանդիսացող ստուգարքներն ու քննությունները:

Ուսանողներից շատերը մտածում են, թե ինչ նոր տարի, երբ չես կարողանալու վայելել այն՝ քննություններ չունենալը դիտելով որպես վայելք: Մյուս մասը մտածում է, ավելի ժիշտ՝ հստակ որոշել է, որ չի անհամազուտացնելու իրեն մնան «դատարկ» բաներով և մի լավ ու-

րախանալու ու քեֆ է անելու բառի ամենալայն իմաստով: Մի երրորդ մասն էլ ընտրելով ուկե միջին կոչված տարբերակ, և՛ կուրսիանա, և՛ կիսագետնա, և՛ կպարապի՝ ամեն բան դնելով իր տեղը:

Ինչ ինչ՝ ընտրող մենք ենք՝ ուսանողներս, սակայն եկեք ընտրեցն այն տարբերակը, որն առավել ընդունելի կլինի բոլորիս համար, թե չէ բոլորս էլ գիտենք, թե անպատրաստ մերկայանալու դեպքում, ինչ «եյլքեր» կարող են լինել: Սակայն ու՜մ են պետք դրանք ու, առհասարակ, այդ «հեշտ» թվացող տարբերակների առկայությունը ի՜նչ է տալիս

մեզ իրականում: Եկեք այս տարի համայնքված կերպով փոխենք այդ ջրի մնան պարզ, բայց գաղտնիքի մնան առեղծվածային իրականությունը, ու կհամոզվենք, որ ամեն ինչ իսկապես մեր ձեռքերում է:

Հուսանք, որ իսկապես գալիք տարում ամեն մեկն ու ամեն բան իրենց տեղում կլինեն:

Երբեք այլ տարբերակ չնախընտրան, ՎՊՄԻ-ի մագիստրանտ ժենյա Նապիթյան



ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԹՈՒՉՔ

Ամանորյա մաղթանքներ

Մարդկային կյանքը մեզն է մի երկար ծանապարհի, որտեղ բազմաթիվ նախատեսված ու չնախատեսված կանգառներ կան: Տևողությամբ ամենաերկար կանգառը թերևս տարեծնունդն է, որը յուրաքանչյուր մարդու համար ինքնահաշվետվության ու հետախայացքի ժամանակաշրջան ասես լինի...

Ամանորն ազդարարող ժամացույցի սլաքի հետ մեկտեղ իմի ես բերուն արածն ու չարածն, ասվածն ու չասածը, ուրախանում ձեռք բերածով ու տխրում բացթողումներով, չստվացածով... Բայց սլաքն իր վտտահ ու դանդաղ քայլերով շարժվում է առաջ՝ ուրախության, սպասումի, հույսի նորի ակնկալիքով: Իրենց ակամեջ շոյող կտկտոցով սլաքներն անընդհատ հիշեցնում են, որ Ամանոր է... Ու Ամանորին պետք է սպասել հրաշքի, որ Ամանորի հեքիաթն իրական է, միայն պետք է այն հյուսել ու հավատալ, որ տարեծնունդի գիշերվա երազանքներն ու տրամադրությունն ամբողջ տարվա ընթացքում ուղեկցելու են՝ առաջացնելով երջանկություն կոչված երանելին...

Թող այս տարի իրականություն դառնան համայն աշխարհի մարդկության երազանքները, թող երկնքի կապույտը տարածվի ամբողջ մոլորակով, թող ուրախությունն ու ծախտը նկարվի բոլորի դեմքին, թող մոլորակը աղաղակվի մանուկների ուրախ քրքիջով, թող հողագունդն արքեան միլիոնավոր ծաղիկների զգլխիչ բույրով ու թող սիրուց խենթացածներն էլ ավելի խենթանան...

Շնորհավոր բոլորիս Նոր Տարին ու Սուրբ Ծնունդը: Թող նա իր նորի անաղարտությանը շղարշի մեզ իր մաքրությամբ ու բարությանը...

Լիլիթ Համբարձումյան

Սեր, ներդաշնակություն, խաղաղություն, մտքի թռիչք ու գլխապտույտ հաջողություններ են մաղթում: Շնորհավոր բոլորիս գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Ժենյա Նախիջյան

Շնորհավորում են բոլորի Նոր տարին ու ցանկանում, որ 2011 թվականը մեզ՝ բոլորիս, բերի երջանկություն ու խաղաղություն:

Բարաջայան Հարություն

Շնորհավորում են բոլորի Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Ցանկանում են քաջ առողջություն, գործնական նվաճումներ: Չկորցնենք հավատը ու չկշտանանք հույսով: Թող լինի սիրո ներդաշնակության ու համերաշխության տարի ու այն ինչ չհաջողվեց ձեռք բերել անցնող

Գայանե Գրիգորյան

Շնորհավորելով 2011 թվականի մուտքը, մենք՝ «Թռիչք»-ի սաներս ակնկալում ենք նորամուտ գիտելիքներ ու հաջողություններ, մեծ կամքի ուժ ու խելք՝ մեր առջև դրված խնդիրները կարգադրելու ու բարձունքների հասնելու համար:

Թող մենք լինենք բարի, կամենող, ժպտեցնես ու միշտ օգնենք միմյանց դժվար հարցերում: Իսկ ամենակարևորը ցանկանում ենք, որ Տերը միշտ մեզ հետ լինի, պաշտպանի մեզ ու թեթև տա, որ կարողանանք ձախել գիտության երկնակամարում, ավելի ու ավելի վեր թռչենք ու հասնենք մեր նպատակներին:

Պողոսյան Անահիտ



ԲԱՐԻՆ ԱՐԱ

Լ ոյնեբերն էր... Կազմակերպությունում որոշում կայացրեցինք միանալ մեր բարեկամ ու գործընկեր «Ինչպե՞տեղ ուղիներ» հի-ի նախաձեռնած «Բարին արա» ակցիային: Պլանավորեցինք իրականացվելիք գործողությունների շարք, որի պատկեր կազմեցին երեք հիմնական ակցիաները՝

1. «Թռիչք» հի-ի տարածքում կազմակերպվեց գրքերի հավաքագրում ու շուրջ 350 կտոր գիրք կազմավեց ու նվիրաբերվեց «Օրբան» կազմակերպությանը,
2. 20-ից ավելի երիտասարդ ու պատանի կամավորականներ 4ամառորի 7 տարբեր կետերում բաժանում էին իրենց պատրաստած բարության կոչերով բացիկները ու անցորդներին հարցնում, թե ինչ է իրենց համար բարությունն ու հորդորում գոնե մի բարի գործով միանալ ակցիային,
3. Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու բակում հրավիրվեց «Բարի հավաք», որի մասնակիցները պետք է իրենց հետ բերեին բարության կոչերով ու բարի մաղթանքներով մանկներ՝ ուղղված բոլոր մարդկանց: «Թռիչքի» բոլոր նախաձեռնություններին ամենակտիվ կերպով արձագանքեց 4ամառորի թիվ 25 դպրոցը: Բավական է մշել, որ «Օրբանի» համար հավաքած գրքերից շուրջ 160-ը բերեցին այս դպրոցի աշակերտները ու աշխարհի հանդամները մասնակցե-

ցին բացիկների բաժանման գործընթացին: Մեր հրավերներին արձագանքելով իրենց մասնակցություն բերեցին նաև թիվ 19 ու թիվ 1 դպրոցները, ինչպես նաև թիվ 1 մշակույթի տունը:

Խորին հարգանքով մեր երախտագիտությունն ու շնորհակալությունն ենք հայտնում վերը մշված հաստատություններին կոլեկտիվներին ու ղեկավարներին՝ բարի կամք ու քաղաքացիական բարձր գիտակցություն դրսևորելու համար ու նրանց դրական օրինակն ի ցույց ենք դնում մնացած դպրոցներին, հի-ներին ու մշակութային օջախներին, որոնք քար անտարբերությամբ որևէ կերպ չարձագանքեցին մեր նախաձեռնություններին:

«Թռիչք» հի-ն ամփոփելով պրոյեկտներն ամենաբարի դպրոց ձևանալից թիվ 25-ը, իսկ ամենաբարի դասարան՝ թիվ 1 դպրոցի 7-րդ «բ» դասարանը: Այս դասարանի գրեթե բոլոր աշակերտները ծրարներ էին պատրաստել, որոնց մեջ բացիկների վրա բարության կոչեր ու մաղթանքներ էին գրել:

Մարդիկ, երբեք մի գլացեք բարություն անել, ու եթե դուք չեք նախաձեռնում, ապա գոնե բարի եղեք միանալ ուրիշների նախաձեռնություններին: Եվ թող աշխարհում իշխի բարին...

«Կրտսեր հայորդաց» խմբակի սաների տպավորությունները...

Հնույնեբերն ամսվա ընթացքում մեր կազմակերպությունը՝ Թռիչք հի-ն իր կրտսեր, պատանական ու երիտասարդական թևերով գնացել էր Գոշավանք ու Հաղարծին՝ ուխտագնացության, որի ժամանակ էլ իրականացվեց կազմակերպության անդամների երդման արարողություն:

Երդման արարողությունը իրականացվեց Գոշավանքում, մենք կանգնեցինք ըստ խմբերի ու միասին երգվեցինք լինել հավատարիմ մայրենի լեզվին ու ժողովրդին, լինել պիտանի մարդ:

Ամեն ինչ տպավորիչ էր ու ոգևորող: Այն ինչ անչափ դուր եկավ: **Նարե Հարությունյան «Կրտսեր հայորդաց» խմբակ, 10 տ**

Ուխտագնացության ժամանակ իմացանք, որ Գոշավանքում երկար տարիներ ձգնել է Մխիթար Գոշը: Վանական համալիրը կազմված էր չորս եկեղեցիներից: Այնտեղ կային շատ խաչքարեր, որոնցից մեկը նվիրված էր Մխիթար Գոշին:

Վանական համալիրը շատ ներդաշնակ էր բնության հետ, որն անչափ գեղեցիկ էր՝ ներկված աշնանային գույներով: Անչափ տպավորված եմ:

Սիրուշիկ Հակոբյան «Կրտսեր հայորդաց» խմբակ, 11 տ

Գոշավանքից հետո մենք գնացինք Հաղարծին, որտեղ չնայաց շինարարական աշխատանքներ էին ընթանում, բայց, միևնույն է, անչափ գեղեցիկ էր:

Աշնանային ներկայանակը իր բոլոր գույները ասես թափել էր անտառի վրա՝ տերևները դարձնելով բազմագույն ու աչք շոյող, որն էլ ավելի էր գեղեցկացրել վանական համալիրը՝ տալով նրան խորհրդավոր տեսք:

Շատ տպավորիչ ու ոգևորող էր քահանայի օրհնությունն ու մեր ամբողջ խմբի կողմից միաբերան արտաբերած տերևնական արդթի աստվածային ուժի աղեցույթությունը, որ ստացանք մենք նորակառույց եկեղեցու կամարների ներքո:

Ես երբեք չեմ մոռանա մեր ուխտագնացությունը, որի ընթացքում շատ բաներ սովորեցինք:

Աննա Միսկարյան «Կրտսեր հայորդաց» խմբակ, 10 տ

«Հրաշք աշուն»

Հրաշք է աշունը, գունազեղ հրաշք՝ փռված ամենուր.....

Աշունը կարծես նկարիչ լինի, որն աշխարհի ամենահրաշք գույներն ունի....

Հրաշք է աշունը, գունազեղ հրաշք, որ ամեն տեղն, որ վայր է ընկնում, ունի գեղեցիկ իր պատմությունը, որ ամեն մի ծառ կամ թեկուզ անտառ իր շքերթությամբ կարծես պատմում է այս թախծոտ աշնան գեղեցկությունը.....

Աննա Դարաբաղդյան

Տխուր էր տերևը աշնան, Եղգում էր անվերջ ու լուռ, Թույլ առ թույլ լալիս էր, ողբում... Եվ երանավ էր արցունքը աչքին

Վարդուց սպասված վառ գարնան մասին:

Ռակայան Մելինե «Կրտսեր հայորդաց» խմբակ, 10տ.

Ինչպե՞ս է առաջացել ծովը

Շարունակ կրակի և սառույցի միջև տեղի էին ունենում բազմաթիվ վեժներ: Կրակի գլխավոր դաշնակիցը լավան էր, իսկ սառույցինը՝ ծյունը: Եվ տեղի ունեցավ սատերազմ, որտեղ կրակը հարթեց սառույցին, և սառույցը հալվեց, ու առաջացան ծովերը:

«Կրտսեր հայորդաց» խմբակի սաներ

Աշնան դեղին տերևները Շշշշում են միասին, Ուրախ-ուրախ պար են գալիս Ու սվավում տխրագին:

Բեկյան Մերի «Կրտսեր հայորդաց» խմբակ, 12տ.

Հրատարակիչ՝ «Թռիչք» հասարակական կազմակերպություն, «ԹՈՒՉՔ» թերթի խմբագրություն
Հասցե՝ Թատերական 6, հեռ.՝ 2-45-07
Գլխավոր խմբագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԿՎՈՐՈՍՅԱՆ
Խմբագիր՝ Ալիսա Գալստյան

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ
Համակարգչային ձեւավորումը՝ Արմեն Օսիպովի

Տպագրության որակի համար պատասխանատու է տպարանը:
Թերթը տպագրվել է՝ «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում
ք. Վանաձոր, Շիրակցի 4^{րդ}, հեռ.՝ 4-03-29